

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Մասիս Լալայան Յուրիկի>> ԱԶ-ի ընդդեմ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/99-1 ծածկագրով ծառայության մատուցման պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծելու պահանջն անվավեր ճանաչելու պահանջի մասին ԵԴ2/0354/02/24 քաղաքացիական գործով պատասխանող Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ներկայացուցչի՝ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժել:

2. <<Մասիս Լալայան Յուրիկի>> ԱԶ-ի ընդդեմ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/99-1 ծածկագրով ծառայության մատուցման պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծելու պահանջն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել ամբողջությամբ:

2.1. անվավեր ճանաչել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի <<ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/99-1>> ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցագիրը:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՕՇԱՆՅԱՆ